Երկրորդ ընթերցում

լրամշակված նախագիծ

Կ-533-17.03.2023-ՊԱ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Ոստիկանությունում ծառայության մասին» 2002 թվականի հուլիսի 3-ի ՀՕ-401-Ն օրենքի (այսուհետ՝ օրենք) 3-րդ գլխի վերնագրում «ԱՆՑՆԵԼԸ» բառից հետո լրացնել «ԵՎ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՂԻ ԱՏԵՍՏԱՎՈՐՈՒՄԸ» բառերով:

Հոդված 2. Օրենքի 13-րդ հոդվածում՝

1) 8-րդ մասից «Սույն մասի պահանջները չեն տարածվում սույն օրենքի 14-րդ հոդվածի 3-րդ մասի երկրորդ պարբերությամբ սահմանված կարգով պաշտոնի նշանակելու դեպքերի վրա:» նախադասությունը հանել,

2) 10-րդ մասից հանել «ատեստավորման,» բառը:

Հոդված 3. Օրենքի 14-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ պարբերությունը և 11-րդ մասն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 4. Օրենքի 15-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«Հոդված 15. Ոստիկանության ծառայողների ատեստավորումը

1. Ոստիկանության պետի տեղակալների, ոստիկանության գլխավոր, ավագ, միջին և կրտսեր խմբերի պաշտոն զբաղեցնող ծառայողների ատեստավորումն անցկացվում է՝

1) զբաղեցրած պաշտոնին համապատասխանությունը ստուգելու և հավելավճար հաշվարկելու կամ զբաղեցրած պաշտոնին համապատասխանությունը ստուգելու և հավելավճարի հաշվարկումը շարունակելու նպատակով.

2) ոստիկանությունում զբաղեցրած պաշտոնին հավասարազոր այլ պաշտոնի կամ առաջխաղացման կարգով այլ պաշտոնի նշանակվելու և այդ պաշտոնին համապատասխանող հավելավճար հաշվարկելու նպատակով:

2. Ոստիկանության ծառայողի ցանկությամբ սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված ատեստավորմանը կարող է նախորդել նրա վերապատրաստումը: Ոստիկանության ծառայողը մինչև ատեստավորումն իրավունք ունի մեկ անգամ անցնելու վերապատրաստում: Ատեստավորման նպատակով վերապատրաստումն անցկացվում է միայն առաջին անգամ ատեստավորման համար:

3. Ոստիկանությունում զբաղեցրած պաշտոնին հավասարազոր այլ պաշտոնի կամ առաջխաղացման կարգով այլ պաշտոնի նշանակվելու համար ոստիկանության ծառայողի ատեստավորումն իրականացվում է վերապատրաստումից հետո:

4. Հաստիքների կրճատման, կառուցվածքային փոփոխության դեպքում՝ ոստիկանությունում այլ պաշտոնի նշանակվելիս, այդ թվում՝ պաշտոնի մեկ աստիճանով իջեցման դեպքում, ինչպես նաև ծառայության այլ վայր հավասարազոր պաշտոնի փոխադրվող ոստիկանության ծառայողները ատեստավորման ենթակա չեն, իսկ ատեստավորված ոստիկանության ծառայողները պահպանում են ատեստավորման արդյունքները, բացառությամբ սույն հոդվածի 9-րդ մասով նախատեսված ժամկետը լրանալու դեպքերի: Սույն օրենքի 14.1-ին հոդվածի համաձայն՝ ոստիկանությունում թափուր պաշտոն զբաղեցնելու համար անցկացվող մրցույթի արդյունքներով պաշտոնի նշանակված ոստիկանության ծառայողը ենթակա չէ սույն հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված ատեստավորման: Այդ դեպքում ոստիկանության ծառայողը պարտավոր է մասնակցել զբաղեցրած պաշտոնին համապատասխանությունը ստուգելու և հավելավճար հաշվարկելու նպատակով անցկացվող ատեստավորմանը՝ սույն հոդվածով սահմանված կարգով:

5. Ոստիկանության ծառայողների ատեստավորման կարգը սահմանվում է Կառավարության որոշմամբ:

6. Ատեստավորման անցկացման նպատակով Լիազոր մարմնի ղեկավարի հրամանով ստեղծվում է ատեստավորման հանձնաժողով (հանձնաժողովներ):

7. Ոստիկանությունում առաջին անգամ պաշտոնի նշանակված ծառայողը ենթակա է ատեստավորման ոչ շուտ, քան պաշտոնի նշանակվելուց վեց ամիս անց: Նա սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված ատեստավորմանը պարտավոր է մասնակցել վեցամսյա ժամկետը լրանալուց հետո երեք տարվա ընթացքում:

8. Ատեստավորման արդյունքներով հավելավճար ստանալու իրավունք ձեռք բերելու դեպքում հավելավճարը հաշվարկվում է այդ իրավունքի ձեռքբերման օրվանից:

9. Համապատասխան պաշտոնում ատեստավորված և տվյալ պաշտոնի խմբի համար սահմանված չափով հավելավճար ստացող ոստիկանության ծառայողները պարտավոր են ատեստավորվել յուրաքանչյուր երեք տարին մեկ անգամ՝ զբաղեցրած պաշտոնին համապատասխանությունը ստուգելու և հավելավճարի հաշվարկումը շարունակելու համար: Զբաղեցրած պաշտոնին համապատասխանությունը ստուգելու և հավելավճարի հաշվարկումը շարունակելու նպատակով ոստիկանության ծառայողը ատեստավորման համար կարող է դիմել նախորդ ատեստավորման արդյունքներով հավելավճար հաշվարկելու իրավունքը ձեռք բերելու օրվանից երկու տարի հետո:

10. Հղիության և ծննդաբերության, ինչպես նաև մինչև երեք տարեկան երեխայի խնամքի համար տրամադրվող արձակուրդում գտնվող ոստիկանության ծառայողը ենթակա է ատեստավորման ոչ շուտ, քան արձակուրդից վերադառնալուց երեք ամիս հետո: Սույն մասով նախատեսված ոստիկանության ծառայողները ատեստավորման համար պարտավոր են դիմել եռամսյա ժամկետի ավարտից հետո երեք տարվա ընթացքում: Արձակուրդում կամ գործուղման մեջ գտնվող կամ ժամանակավոր անաշխատունակ ծառայողը ենթակա է ատեստավորման ոչ շուտ, քան ծառայության անցնելուց երկու ամիս հետո:

11. Եթե ոստիկանության ծառայողը սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված ատեստավորման արդյունքներով ստացել է սույն հոդվածի 13-րդ մասի 1-ին կամ 2-րդ կետով նախատեսված եզրակացությունը, որից հետո նրան տրամադրվել է հղիության և ծննդաբերության, ինչպես նաև մինչև երեք տարեկան երեխայի խնամքի արձակուրդ, ապա հավելավճարի հաշվարկման ժամկետը արձակուրդի ժամանակահատվածում կասեցվում է: Այն վերսկսվում է նշված տեսակի արձակուրդից վերադառնալու օրը:

12. Ատեստավորման ենթակա ոստիկանության ծառայողն ատեստավորման օրվանից ոչ ուշ, քան մեկ ամիս առաջ տեղեկացվում է ատեստավորման անցկացման ժամկետի մասին:

13. Սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված ատեստավորման արդյունքներով կայացվում է հետևյալ եզրակացություններից որևէ մեկը՝

1) համապատասխանում է զբաղեցրած պաշտոնին և ենթակա է հավելավճար հաշվարկելու.

2) համապատասխանում է զբաղեցրած պաշտոնին և ենթակա է շարունակելու հավելավճարի հաշվարկումը.

3) չի համապատասխանում զբաղեցրած պաշտոնին և ենթակա չէ հավելավճար հաշվարկելու.

4) չի համապատասխանում զբաղեցրած պաշտոնին և ենթակա չէ շարունակելու հավելավճարի հաշվարկումը:

14. Ատեստավորման մասնակցած այն ծառայողները, որոնց վերաբերյալ կայացվել է սույն հոդվածի 13-րդ մասի 3-րդ կամ 4-րդ կետերով նախատեսված եզրակացությունը, ատեստավորման ժամկետի ընթացքում ունեն ատեստավորմանը կրկին մասնակցելու առնվազն երկու հնարավորություն՝ համաձայն Լիազոր մարմնի ղեկավարի կողմից հաստատված ժամանակացույցի:

15. Սույն հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված ատեստավորման արդյունքներով կայացվում է հետևյալ եզրակացություններից որևէ մեկը՝

1) ենթակա է ոստիկանությունում զբաղեցրած պաշտոնին հավասարազոր այլ պաշտոնի կամ առաջխաղացման կարգով այլ պաշտոնի նշանակվելու և նոր պաշտոնին համապատասխանող հավելավճար հաշվարկելու.

2) ենթակա չէ ոստիկանությունում զբաղեցրած պաշտոնին հավասարազոր այլ պաշտոնի կամ առաջխաղացման կարգով այլ պաշտոնի նշանակվելու և նոր պաշտոնին համապատասխանող հավելավճար հաշվարկելու:

16. Սույն հոդվածի 13-րդ և 15-րդ մասերով նախատեսված եզրակացությունները հաստատվում են տվյալ ոստիկանության ծառայողին պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձի հրամանով:

17. Ատեստավորման մասնակցած այն ծառայողները, որոնց վերաբերյալ կայացվել է սույն հոդվածի 15-րդ մասի 2-րդ կետով նախատեսված եզրակացությունը, շարունակում են պաշտոնավարել իրենց պաշտոններում՝ այդ պաշտոնների համար ստացած հավելավճարի պահպանմամբ: Նշված ծառայողները սույն հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված ատեստավորմանը կարող են կրկին մասնակցել ոչ շուտ, քան հրամանով հաստատված եզրակացությանը ծանոթանալու պահից մեկ տարի հետո:

18. Ոստիկանության ծառայողը պարտադիր ծանոթացվում է ատեստավորման արդյունքներին և կայացված եզրակացությանը: Ծառայողն իրավունք ունի վերադասության կարգով բողոքարկելու ատեստավորման արդյունքները և կայացված եզրակացությունը՝ դրանց ծանոթանալու օրվանից հետո ոչ ուշ, քան հինգ աշխատանքային օրվա ընթացքում կամ դատական կարգով:

19. Հավելավճար ստացող ոստիկանության ծառայողներին հաշվարկված հավելավճարի վճարումը դադարում է՝

1) սույն հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված ատեստավորման արդյունքներով ոստիկանությունում զբաղեցրած պաշտոնին հավասարազոր այլ պաշտոնի կամ առաջխաղացման կարգով այլ պաշտոնի նշանակվելիս՝ այդ պաշտոնին համապատասխանող հավելավճար հաշվարկելով.

2) ոստիկանության պետի պաշտոնին նշանակվելիս:

20. Ոստիկանության ծառայողների ատեստավորման արդյունքներով հաշվարկվող հավելավճարի չափերը և վճարման կարգը սահմանվում են Կառավարության որոշմամբ: Սույն հոդվածի համաձայն հավելավճար հաշվարկվելու դեպքում ոստիկանության ծառայողներին «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքի 32-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված լրավճարը և զինվորական ծառայության պաշտոն զբաղեցնողների համար նախատեսված հավելումները չեն հաշվարկվում:

21. Ոստիկանության այն ծառայություններում, որոնցում ծառայողների անձը ծածկագրված է, և նրանք իրենց լիազորություններն իրականացնում են գաղտնագործունեության լիակատար պահպանմամբ, ատեստավորման կարգը սահմանում է Լիազոր մարմնի ղեկավարը:»:

Հոդված 5. Օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասում՝

1) 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«1) ծառայության այլ վայր հավասարազոր պաշտոնին՝ ոստիկանության տվյալ պաշտոնում առնվազն մեկ տարի ծառայելուց հետո, կրտսեր խմբի պաշտոն զբաղեցնող ծառայողների փոխադրման դեպքում՝ առնվազն վեց ամիս ծառայելուց հետո, իսկ Ոստիկանության պետի որոշմամբ՝ մինչև սահմանված ժամկետները լրանալը.»,

2) 4-րդ կետն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 6. Օրենքի 40-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի 4-րդ կետում «:» կետադրական նշանը փոխարինել «.» կետադրական նշանով,

2) 1-ին մասը լրացնել 5-րդ կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«5) սույն օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետով նախատեսված հիմքով ոստիկանությունում ծառայությունից ազատվելու դեպքում:»:

Հոդված 7. Օրենքի 45-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի 2.1-ին կետում «ստորաբաժանման լուծարման կամ վերակազմակերպման» բառերը փոխարինել «կառուցվածքային փոփոխության» բառերով,

2) 1-ին մասի 12-րդ կետում «:» կետադրական նշանը փոխարինել «.» կետադրական նշանով,

3) 1-ին մասը լրացնել 13-րդ կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«13) սույն օրենքի 15-րդ հոդվածի 7-րդ, 9-րդ կամ 10-րդ մասերով նախատեսված ժամկետներում սույն օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված ատեստավորմանը չմասնակցելու կամ սույն օրենքի 15-րդ հոդվածի 14-րդ մասով նախատեսված ժամկետում ատեստավորմանը կրկին չմասնակցելու կամ ատեստավորման արդյունքում սույն օրենքի 15-րդ հոդվածի 13-րդ մասի 3-րդ կամ 4-րդ կետերով նախատեսված եզրակացություն կայացվելու դեպքում:»:

4) լրացնել 4-րդ մաս՝ հետևյալ բովանդակությամբ.

«4. Սույն հոդվածի 1-ին մասի 13-րդ կետի պահանջները չեն տարածվում Լիազոր մարմնի ուսումնական հաստատություններում սովորող, այդ թվում՝ Լիազոր մարմնի կողմից այլ ուսումնական հաստատություններ գործուղված ոստիկանության ծառայողների վրա:»:

Հոդված 8. Օրենքի 46-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերում «ստորաբաժանման լուծարման կամ վերակազմակերպման» բառերը փոխարինել «կառուցվածքային փոփոխության» բառերով,

2) 1-ին մասի 4-րդ կետից «ատեստավորման արդյունքների հիման վրա,» բառերը հանել:

Հոդված 9. Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2023 թվականի մայիսի 1-ից:

2. Ոստիկանության այն ծառայողները, ովքեր ցանկություն են հայտնել սույն օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված ատեստավորումն անցնել վերապատրաստումից հետո, այդ իրավունքը կարող են իրականացնել 2024 թվականի հունվարի 1-ից հետո՝ Լիազոր մարմնի ղեկավարի կողմից հաստատված ժամանակացույցի համաձայն:

3. Ոստիկանությունում այլ պաշտոնի կամ ծառայության փոխադրվող, ինչպես նաև առաջխաղացման կարգով նշանակվող ոստիկանության ծառայողների համար ատեստավորման կամ վերապատրաստման պարտադիր պահանջը գործում է 2024 թվականի հունվարի 1-ից:

4. Ոստիկանության գործող կառուցվածքում ներառված, սակայն Ներքին գործերի նախարարության ձևավորումից հետո գործունեությունը դադարեցվող աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումների ծառայողներն ատեստավորման ենթակա չեն, իսկ գործունեությունը դադարեցվող հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումների ծառայողների ցանկը, ովքեր ենթակա չեն ատեստավորման, սահմանվում է Լիազոր մարմնի ղեկավարի հրամանով:

5. Սույն օրենքից բխող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերն ընդունվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ

Հոդված 1. «Ոստիկանությունում ծառայության մասին» 2002 թվականի հուլիսի 3-ի ՀՕ-401-Ն օրենքի (այսուհետ՝ օրենք) 3-րդ գլխի վերնագրում «ԱՆՑՆԵԼԸ» բառից հետո լրացնել «ԵՎ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՂԻ ԱՏԵՍՏԱՎՈՐՈՒՄԸ» բառերով:

Հոդված 2. Օրենքի 13-րդ հոդվածում՝

1) 8-րդ մասից «Սույն մասի պահանջները չեն տարածվում սույն օրենքի 14-րդ հոդվածի 3-րդ մասի երկրորդ պարբերությամբ սահմանված կարգով պաշտոնի նշանակելու դեպքերի վրա:» նախադասությունը հանել,

2) 10-րդ մասից հանել «ատեստավորման,» բառը:

Հոդված 3. Օրենքի 14-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ պարբերությունը և 11-րդ մասն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 4. Օրենքի 15-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«Հոդված 15. Ոստիկանության ծառայողների ատեստավորումը

2. Ոստիկանության **պետի տեղակալների, ոստիկանության գլխավոր, ավագ, միջին և կրտսեր խմբերի պաշտոն զբաղեցնող** ծառայողների ատեստավորումն անցկացվում է՝

1) **զբաղեցրած պաշտոնին համապատասխանությունը ստուգելու և** հավելավճար հաշվարկելու կամ **զբաղեցրած պաշտոնին համապատասխանությունը ստուգելու և** հավելավճարի հաշվարկումը շարունակելու նպատակով.

2) ոստիկանությունում զբաղեցրած պաշտոնին հավասարազոր **այլ պաշտոնի** կամ առաջխաղացման կարգով այլ պաշտոնի նշանակվելու և այդ պաշտոնին համապատասխանող հավելավճար հաշվարկելու նպատակով:

2. Ոստիկանության ծառայողի ցանկությամբ սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված ատեստավորմանը կարող է նախորդել նրա վերապատրաստումը: Ոստիկանության ծառայողը մինչև ատեստավորումն իրավունք ունի մեկ անգամ անցնելու վերապատրաստում: Ատեստավորման նպատակով վերապատրաստումն անցկացվում է միայն առաջին անգամ ատեստավորման համար:

3. Ոստիկանությունում զբաղեցրած պաշտոնին հավասարազոր **այլ պաշտոնի** կամ առաջխաղացման կարգով այլ պաշտոնի նշանակվելու համար ոստիկանության ծառայողի ատեստավորումն իրականացվում է վերապատրաստումից հետո:

4. Հաստիքների կրճատման, կառուցվածքային փոփոխության դեպքում՝ ոստիկանությունում այլ պաշտոնի նշանակվելիս, այդ թվում՝ պաշտոնի մեկ աստիճանով իջեցման դեպքում, ինչպես նաև ծառայության այլ վայր հավասարազոր պաշտոնի փոխադրվող ոստիկանության ծառայողները ատեստավորման ենթակա չեն, **իսկ ատեստավորված ոստիկանության ծառայողները պահպանում են ատեստավորման արդյունքները,** բացառությամբ սույն հոդվածի ~~8-րդ~~ **9-րդ** մասով նախատեսված ժամկետը լրանալու դեպքերի: Սույն օրենքի 14.1-

ին հոդվածի համաձայն՝ ոստիկանությունում թափուր պաշտոն զբաղեցնելու համար անցկացվող մրցույթի արդյունքներով պաշտոնի նշանակված ոստիկանության ծառայողը ենթակա չէ սույն հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված ատեստավորման: Այդ դեպքում ոստիկանության ծառայողը ~~կարող է~~ **պարտավոր է** մասնակցել **զբաղեցրած պաշտոնին համապատասխանությունը ստուգելու և** հավելավճար հաշվարկելու նպատակով անցկացվող ատեստավորմանը՝ սույն հոդվածով սահմանված կարգով:

~~4~~**5**. Ոստիկանության ծառայողների ատեստավորման կարգը սահմանվում է Կառավարության որոշմամբ:

~~5~~**6**. Ատեստավորման անցկացման նպատակով Լիազոր մարմնի ղեկավարի հրամանով ստեղծվում է ատեստավորման հանձնաժողով (հանձնաժողովներ):

~~6~~**7**. Ոստիկանությունում առաջին անգամ պաշտոնի նշանակված ծառայողը **ենթակա է ատեստավորման ոչ շուտ, քան** ~~կարող է ատեստավորում անցնել~~ պաշտոնի նշանակվելուց ~~ոչ շուտ, քան~~ վեց ամիս անց: Նա սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված ատեստավորման**ը** ~~համար դիմում է~~ **պարտավոր է մասնակցել** վեցամսյա ժամկետը լրանալուց հետո երեք տարվա ընթացքում:

~~7~~**8**. Ատեստավորման արդյունքներով հավելավճար ստանալու իրավունք ձեռք բերելու դեպքում հավելավճարը հաշվարկվում է այդ իրավունքի ձեռքբերման օրվանից:

~~8~~**9**. Համապատասխան պաշտոնում ատեստավորված և տվյալ պաշտոնի խմբի համար սահմանված չափով հավելավճար ստացող ոստիկանության ծառայողները **պարտավոր են ատեստավորվել** ~~ատեստավորվում են~~ յուրաքանչյուր երեք տարին մեկ անգամ՝ **զբաղեցրած պաշտոնին համապատասխանությունը ստուգելու և** հավելավճարի հաշվարկումը շարունակելու համար: **Զբաղեցրած պաշտոնին համապատասխանությունը ստուգելու և** հավելավճարի հաշվարկումը շարունակելու նպատակով ~~ատեստավորման համար դիմելու իրավունքը ոստիկանության ծառայողի մոտ ծագում է~~ **ոստիկանության ծառայողը ատեստավորման համար կարող է դիմել** նախորդ ատեստավորման արդյունքներով հավելավճար հաշվարկելու իրավունքը ձեռք բերելու օրվանից երկու տարի հետո:

~~9~~**10**. Հղիության և ծննդաբերության, ինչպես նաև մինչև երեք տարեկան երեխայի խնամքի համար տրամադրվող արձակուրդում գտնվող ոստիկանության ծառայողը ենթակա է ատեստավորման ոչ շուտ, քան արձակուրդից վերադառնալուց երեք ամիս հետո: Սույն մասով նախատեսված ոստիկանության ծառայողները ատեստավորման համար ~~դիմում են~~ **պարտավոր են դիմել** եռամսյա ժամկետի ավարտից հետո երեք տարվա ընթացքում: Արձակուրդում կամ գործուղման մեջ գտնվող կամ ժամանակավոր անաշխատունակ ծառայողը ենթակա է ատեստավորման ոչ շուտ, քան ծառայության անցնելուց երկու ամիս հետո:

~~10~~**11**. Եթե ոստիկանության ծառայողը սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված ատեստավորման արդյունքներով ստացել է սույն հոդվածի ~~12-րդ~~ **13-րդ** մասի 1-ին կամ 2-րդ կետով նախատեսված եզրակացությունը, որից հետո նրան տրամադրվել է հղիության և ծննդաբերության, ինչպես նաև մինչև երեք տարեկան երեխայի խնամքի արձակուրդ, ապա հավելավճարի հաշվարկման ժամկետը արձակուրդի ժամանակահատվածում կասեցվում է: Այն վերսկսվում է նշված տեսակի արձակուրդից վերադառնալու օրը:

~~11~~**12**. Ատեստավորման ենթակա ոստիկանության ծառայողն ատեստավորման օրվանից ոչ ուշ, քան մեկ ամիս առաջ տեղեկացվում է ատեստավորման անցկացման ժամկետի մասին:

~~12~~**13**. Սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված ատեստավորման արդյունքներով կայացվում է հետևյալ եզրակացություններից որևէ մեկը՝

1) **համապատասխանում է զբաղեցրած պաշտոնին և** ենթակա է հավելավճար հաշվարկելու.

2) **համապատասխանում է զբաղեցրած պաշտոնին և** ենթակա է շարունակելու հավելավճարի հաշվարկումը.

3) **չի համապատասխանում զբաղեցրած պաշտոնին և** ենթակա չէ հավելավճար հաշվարկելու.

4) **չի համապատասխանում զբաղեցրած պաշտոնին և** ենթակա չէ շարունակելու հավելավճարի հաշվարկումը:

~~13~~**14**. Ատեստավորման մասնակցած այն ծառայողները, որոնց վերաբերյալ կայացվել է սույն հոդվածի ~~12-րդ~~ **13-րդ** մասի 3-րդ կամ 4-րդ կետերով նախատեսված եզրակացությունը, ատեստավորման ~~համար դիմելու~~ ժամկետի ընթացքում ունեն ատեստավորման**ը** ~~համար~~ կրկին ~~դիմելու~~ **մասնակցելու** առնվազն երկու հնարավորություն՝ համաձայն Լիազոր մարմնի ղեկավարի կողմից հաստատված ժամանակացույցի:

~~14~~**15**. Սույն հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված ատեստավորման արդյունքներով կայացվում է հետևյալ եզրակացություններից որևէ մեկը՝

1) ենթակա է ոստիկանությունում զբաղեցրած պաշտոնին հավասարազոր **այլ պաշտոնի** կամ առաջխաղացման կարգով այլ պաշտոնի նշանակվելու և նոր պաշտոնին համապատասխանող հավելավճար հաշվարկելու.

2) ենթակա չէ ոստիկանությունում զբաղեցրած պաշտոնին հավասարազոր **այլ պաշտոնի** կամ առաջխաղացման կարգով այլ պաշտոնի նշանակվելու և նոր պաշտոնին համապատասխանող հավելավճար հաշվարկելու:

~~15~~**16**. Սույն հոդվածի ~~12-րդ~~ **13-րդ** և ~~14-րդ~~ **15-րդ** մասերով նախատեսված եզրակացությունները հաստատվում են տվյալ ոստիկանության ծառայողին պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձի հրամանով:

~~16~~**17**. Ատեստավորման մասնակցած այն ծառայողները, որոնց վերաբերյալ կայացվել է սույն հոդվածի ~~14-րդ~~ **15-րդ** մասի 2-րդ կետով նախատեսված եզրակացությունը, շարունակում են պաշտոնավարել իրենց պաշտոններում՝ այդ պաշտոնների համար ստացած հավելավճարի պահպանմամբ: Նշված ծառայողները սույն հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված ատեստավորման**ը** ~~համար~~ կարող են կրկին **մասնակցել** ~~դիմել~~ ոչ շուտ, քան հրամանով հաստատված եզրակացությանը ծանոթանալու պահից մեկ տարի հետո:

~~17~~**18**. Ոստիկանության ծառայողը պարտադիր ծանոթացվում է ատեստավորման արդյունքներին և կայացված եզրակացությանը: Ծառայողն իրավունք ունի վերադասության կարգով բողոքարկելու ատեստավորման արդյունքները և կայացված եզրակացությունը՝ դրանց ծանոթանալու օրվանից հետո ոչ ուշ, քան հինգ աշխատանքային օրվա ընթացքում կամ դատական կարգով:

~~18~~**19**. Հավելավճար ստացող ոստիկանության ծառայողներին հաշվարկված հավելավճարի վճարումը դադարում է՝

1) սույն հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված ատեստավորման արդյունքներով ոստիկանությունում զբաղեցրած պաշտոնին հավասարազոր **այլ պաշտոնի** կամ առաջխաղացման կարգով այլ պաշտոնի նշանակվելիս՝ այդ պաշտոնին համապատասխանող հավելավճար հաշվարկելով.

~~2) սույն հոդվածի 12-րդ մասի 4-րդ կետով նախատեսված եզրակացությունը կայացնելիս.~~

~~3~~**2**) ոստիկանության **պետի** ~~բարձրագույն խմբի պաշտոնի~~ **պաշտոնին** նշանակվելիս:

~~19~~**20**. Ոստիկանության ծառայողների ատեստավորման արդյունքներով հաշվարկվող հավելավճարի չափերը և վճարման կարգը սահմանվում են Կառավարության որոշմամբ: Սույն հոդվածի համաձայն հավելավճար

հաշվարկվելու դեպքում ոստիկանության ծառայողներին «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքի 32-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված լրավճարը և զինվորական ծառայության պաշտոն զբաղեցնողների համար նախատեսված հավելումները չեն հաշվարկվում:

~~20~~**21**. Ոստիկանության այն ծառայություններում, որոնցում ծառայողների անձը ծածկագրված է, և նրանք իրենց լիազորություններն իրականացնում են գաղտնագործունեության լիակատար պահպանմամբ, ատեստավորման կարգը ~~և պայմանները~~ սահմանում է Լիազոր մարմնի ղեկավարը:»:

Հոդված 5. Օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասում՝

1) 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«1) ծառայության այլ վայր հավասարազոր պաշտոնին՝ ոստիկանության տվյալ պաշտոնում առնվազն մեկ տարի ծառայելուց հետո, կրտսեր խմբի պաշտոն զբաղեցնող ծառայողների փոխադրման դեպքում՝ առնվազն վեց ամիս ծառայելուց հետո, իսկ Ոստիկանության պետի որոշմամբ՝ մինչև սահմանված ժամկետները լրանալը.»,

2) 4-րդ կետն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 6. Օրենքի 40-րդ հոդվածում՝

3) 1-ին մասի 4-րդ կետում «:» կետադրական նշանը փոխարինել «.» կետադրական նշանով,

4) 1-ին մասը լրացնել 5-րդ կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«5) սույն օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետով նախատեսված հիմքով ոստիկանությունում ծառայությունից ազատվելու դեպքում:»:

Հոդված 7. Օրենքի 45-րդ հոդվածում՝

4) 1-ին մասի 2.1-ին կետում «ստորաբաժանման լուծարման կամ վերակազմակերպման» բառերը փոխարինել «կառուցվածքային փոփոխության» բառերով,

5) 1-ին մասի 12-րդ կետում «:» կետադրական նշանը փոխարինել «.» կետադրական նշանով,

6) 1-ին մասը լրացնել 13-րդ կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«13) սույն օրենքի 15-րդ հոդվածի ~~6-րդ~~ **7-րդ**, ~~8-րդ~~ **9-րդ** կամ ~~9-րդ~~ **10-րդ** մասերով նախատեսված ժամկետներում սույն օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված ատեստավորման**ը** ~~համար չդիմելու~~ **չմասնակցելու** կամ սույն օրենքի 15-րդ հոդվածի ~~13-րդ~~ **14-րդ** մասով նախատեսված ժամկետում ատեստավորման**ը** ~~համար~~ կրկին ~~չդիմելու~~ **չմասնակցելու** կամ ատեստավորման արդյունքում սույն օրենքի 15-րդ հոդվածի ~~12-րդ~~ **13-րդ** մասի 3-րդ կամ 4-րդ կետերով նախատեսված եզրակացություն կայաց~~նվ~~**վ**ելու դեպքում:»:

4) ~~Հոդվածը~~ լրացնել 4-րդ մաս~~ով~~՝ հետևյալ բովանդակությամբ.

«4. **Սույն հոդվածի 1-ին մասի 13-րդ կետի պահանջները չեն տարածվում** ~~Ոստիկանության ծառայողները (բացառությամբ~~ Լիազոր մարմնի ուսումնական հաստատություններում սովորողը, այդ թվում՝ Լիազոր մարմնի կողմից այլ ուսումնական հաստատություններ գործուղվածը~~)~~ **ոստիկանության ծառայողների վրա** ~~ազատվում են ոստիկանությունում ծառայությունից սույն օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով (այդ թվում՝ սույն օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասով) նախատեսված ատեստավորման համար ոչ ուշ, քան երեք տարվա ընթացքում չդիմելու դեպքում~~:»:

Հոդված 8. Օրենքի 46-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերում «ստորաբաժանման լուծարման կամ վերակազմակերպման» բառերը փոխարինել «կառուցվածքային փոփոխության» բառերով,

2) 1-ին մասի 4-րդ կետից «ատեստավորման արդյունքների հիման վրա,» բառերը հանել:

Հոդված 9. Եզրափակիչ մաս և Ա~~ա~~նցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2023 թվականի մայիսի 1-ից:

2. Ոստիկանության այն ծառայողները, ովքեր ցանկություն են հայտնել սույն օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված ատեստավորումն անցնել վերապատրաստումից հետո, այդ իրավունքը կարող են իրականացնել 2024 թվականի հունվարի 1-ից հետո՝ Լիազոր մարմնի ղեկավարի կողմից հաստատված ժամանակացույցի համաձայն:

3. Ոստիկանությունում այլ պաշտոնի կամ ծառայության փոխադրվող, ինչպես նաև առաջխաղացման կարգով նշանակվող ոստիկանության ծառայողների համար ատեստավորման կամ վերապատրաստման պարտադիր պահանջը գործում է 2024 թվականի հունվարի 1-ից:

4. Ոստիկանության գործող կառուցվածքում ներառված, սակայն Ներքին գործերի նախարարության ձևավորումից հետո գործունեությունը դադարեցվող աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումների ծառայողներն ատեստավորման ենթակա չեն, իսկ գործունեությունը դադարեցվող հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումների ծառայողների ցանկը, ովքեր ենթակա չեն ատեստավորման, սահմանվում է Լիազոր մարմնի ղեկավարի հրամանով:

5. Սույն օրենքից բխող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերն ընդունվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ 1-ԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ՊԵՏԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԶԲԱՂԵՑՆՈՂ ԱՆՁԱՆՑ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-533-17.03.2023-ՊԱ-011/1) ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
«ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ					
1.	***Կառավարություն, ՀՀ Ազգային ժողովի Պաշտպանության և անվտանգության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Անդրանիկ Քոչարյան***	Նախագծի 4-րդ հոդված	Նախագծի 4-րդ հոդվածով նոր շարադրվող 15-րդ հոդվածում առաջարկվում է որպես ատեստավորման նպատակ նախատեսել նաև զբաղեցրած պաշտոնին համապատասխանությունը ստուգելու վերաբերյալ դրույթ: Բացի այդ, առաջարկվում է ատեստավորումը ոստիկանության ծառայողների համար սահմանել որպես իմպերատիվ պահանջ:	**Ընդունվել է** Նախագծի 4-րդ հոդվածում շարադրվող ողջ 15-րդ հոդվածում, որպես ատեստավորման նպատակ, նախատեսվել է նաև զբաղեցրած պաշտոնին համապատասխանությունը ստուգելու վերաբերյալ դրույթ, ինչպես նաև ատեստավորումը ոստիկանության ծառայողների համար սահմանվել է որպես պարտադիր պահանջ (մասնավորապես՝ Նախագծի 4-րդ հոդվածով շարադրվող 15-րդ հոդվածի 3-րդ (4-րդ), մասում «կարող է մասնակցել» բառերը փոխարինվել են «պարտավոր է մասնակցել» բառերով, 6-րդ (7-րդ) մասում «ատեստավորման համար դիմում է» բառերը փոխարինվել են «ատեստավորմանը պարտավոր է մասնակցել» բառերով, իսկ 9-րդ (10-րդ) մասում «դիմում են» բառերը՝ «պարտավոր են դիմել» բառերով:	**Ընդունվել է**

				Միաժամանակ, խմբագրվել են ատեստավորման արդյունքում կայացվող եզրակացությունների անվանումները: Մասնավորապես՝ Նախագծի 4-րդ հոդվածով շարադրվող 15-րդ հոդվածի 12-րդ (13-րդ) մասի 1-ին և 2-րդ կետերում «ենթակա է» բառերից առաջ լրացնել «համապատասխանում է զբաղեցրած պաշտոնին և» բառերը, իսկ 3-րդ և 4-րդ կետերում «ենթակա է» բառերից առաջ լրացնել «չի համապատասխանում զբաղեցրած պաշտոնին և» բառերը:	
2.	***Կառավարություն, ՀՀ Ազգային ժողովի Պաշտպանության և անվտանգության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Անդրանիկ Քոչարյան***	Նախագծի 4-րդ հոդված	Առաջարկվում է Նախագծի 4-րդ հոդվածով փոփոխվող 15-րդ հոդվածում «հավասարազոր» բառից հետո լրացնել «այլ պաշտոնի» բառերը՝ իրավական որոշակիությունը ապահովելու և տարակարծիք մեկնաբանություններից խուսափելու համար:	**Ընդունվել է** Նախագծի 4-րդ հոդվածով փոփոխվող 15-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետում, 3-րդ մասում, 14-րդ (15-րդ) հոդվածի 1-ին և 2-րդ կետերում, 18-րդ (19-րդ) հոդվածում «հավասարազոր» բառից հետո լրացվել են «այլ պաշտոնի» բառերը՝ իրավական որոշակիությունը ապահովելու և տարակարծիք մեկնաբանություններից խուսափելու համար:	**Ընդունվել է**
3.	***Կառավարություն***	Նախագծի 4-րդ հոդված	Առաջարկվում է Նախագծի 4-րդ հոդվածով փոփոխվող 15-րդ հոդվածի 3-րդ մասը նախատեսել առանձին մասերով՝ հաշվի առնելով դրույթում առկա տարբեր իրավակարգավորումները:	**Ընդունվել է** Նախագծի 4-րդ հոդվածով փոփոխվող 15-րդ հոդվածի 3-րդ մասը խմբագրվել և շարադրվել է երկու առանձին մասերով (3-րդ և 4-րդ մասեր)՝ հաշվի առնելով դրույթում առկա տարբեր իրավակարգավորումները: Արդյունքում փոփոխվել է նաև նախագծի 4-րդ հոդվածի համարակալումը, ինչպես նաև Նախագծի ողջ տեքստում կիրառվող	**Ընդունվել է**

				հղումները: Նշված փոփոխությամբ պայմանավորված խմբագրվել է նաև Նախագծի 7-րդ հոդվածի 3-րդ կետը, որով լրացում է կատարվում Օրենքի 45-րդ հոդվածում, մասնավորապես, որպես ազատման հիմք նախատեսվում է նաև ոստիկանության ծառայողների կողմից ատեստավորում չանցնելը:	
4.	***Կառավարություն, ՀՀ Ազգային ժողովի Պաշտպանության և անվտանգության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Անդրանիկ Քոչարյան***	Նախագծի 4-րդ հոդված	Առաջարկվում է Նախագծի 4-րդ հոդվածով փոփոխվող 15-րդ հոդվածի 3-րդ (4-րդ) մասում հստակեցնել ատեստավորված ոստիկանության ծառայողների համար ոստիկանությունում այլ պաշտոնի նշանակվելիս, այդ թվում՝ պաշտոնի մեկ աստիճանով իջեցման, ինչպես նաև ծառայության այլ վայր հավասարազոր պաշտոնի փոխադրվող ոստիկանության ծառայողների ատեստավորման հետ կապված հարաբերությունները:	**Ընդունվել է** Նախագծի 4-րդ հոդվածով փոփոխվող 15-րդ հոդվածի 3-րդ (4-րդ) մասում «ատեստավորման ենթակա չեն,» բառերից հետո լրացվել է «իսկ ատեստավորված ոստիկանության ծառայողները պահպանում են ատեստավորման արդյունքները,» բառերը:	**Ընդունվել է**
5.	***Կառավարություն, ՀՀ Ազգային ժողովի Պաշտպանության և անվտանգության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Անդրանիկ Քոչարյան***	Նախագծի 4-րդ հոդված	Նախագծի 4-րդ հոդվածով փոփոխվող 15-րդ հոդվածի 6-րդ (7-րդ) մասի «կարող է ատեստավորում անցնել» բառերը կարող են ունենալ հայեցողական նշանակություն, ուստի առաջարկվում է խմբագրել նշված դրույթը՝ իրավական որոշակիությունը ապահովելու և տարակարծիք մեկնաբանություններից խուսափելու համար:	**Ընդունվել է** Նախագծի 4-րդ հոդվածով փոփոխվող 15-րդ հոդվածի 6-րդ (7-րդ) մասը խմբագրվել է: Մասնավորապես, «կարող է ատեստավորում անցնել պաշտոնի նշանակվելուց ոչ շուտ, քան» բառերը փոխարինվել են «ենթակա է ատեստավորման ոչ շուտ, քան պաշտոնի նշանակվելուց» բառերով:	**Ընդունվել է**
6.	***Կառավարություն, ՀՀ Ազգային ժողովի Պաշտպանության և անվտանգության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Անդրանիկ Քոչարյան***	Նախագծի 4-րդ հոդված	Նախագծի 4-րդ հոդվածով փոփոխվող 15-րդ հոդվածի 8-րդ (9-րդ) մասի «ատեստավորման համար դիմելու իրավունքը ոստիկանության ծառայողի մոտ ծագում է» բառերն առաջարկվում է խմբագրել՝ տարընկալումներից խուսափելու համար:	**Ընդունվել է** Նախագծի 4-րդ հոդվածով փոփոխվող 15-րդ հոդվածի 8-րդ (9-րդ) մասի «ատեստավորման համար դիմելու իրավունքը ոստիկանության ծառայողի մոտ ծագում է» բառերը փոխարինվել են «ոստիկանության ծառայողը ատեստավորման համար	**Ընդունվել է**

				կարող է դիմել» բառերով:	
7.	***Կառավարություն***	Նախագծի 4-րդ հոդված	Առաջարկվում է Նախագծի 4-րդ հոդվածով փոփոխվող 15-րդ հոդվածի 18-րդ (19-րդ) մասից, որպես հավելավճարի վճարման դադարման հիմք, հանել 2-րդ կետը, քանի որ նշված հիմքը հանդիսանում է ոստիկանությունում ծառայությունից ազատելու հիմք:	**Ընդունվել է** Նախագծի 4-րդ հոդվածով փոփոխվող 15-րդ հոդվածի 18-րդ (19-րդ) մասից, որպես հավելավճարի վճարման դադարման հիմք, հանվել է 2-րդ կետը, քանի որ նշված հիմքը նախատեսվել է որպես ոստիկանությունում ծառայությունից ազատելու հիմք:	**Ընդունվել է**
8.	***Կառավարություն***	Նախագծի 4-րդ հոդված	Առաջարկվում է Նախագծի 4-րդ հոդվածով փոփոխվող 15-րդ հոդվածի 20-րդ (21-րդ) մասից հանել «և պայմանները» բառերը՝ հաշվի առնելով, որ կարգն իր մեջ ներառում է նաև պայմաններ:	**Ընդունվել է** Նախագծի 4-րդ հոդվածով փոփոխվող 15-րդ հոդվածի 20-րդ (21-րդ) մասից հանվել է «և պայմանները» բառերը՝ հաշվի առնելով այն հանգամքը, որ սահմանվող կարգն իր մեջ ներառելու է նաև պայմաններ:	**Ընդունվել է**
9.	***Կառավարություն***	Նախագծի 7-րդ հոդված	Առաջարկվում է Նախագծի 7-րդ հոդվածով լրացվող 4-րդ կետը խմբագրել՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ նույն հոդվածի 3-րդ կետով արդեն իսկ նախատեսվում են նշված կարգավորումները:	**Ընդունվել է** Խմբագրվել է Նախագծի 7-րդ հոդվածով լրացվող 4-րդ կետը՝ անհարկի կրկնություններից խուսափելու համար: Մասնավորապես՝ նույն հոդվածի 3-րդ կետով նախատեսվող կարգավորումներով արդեն իսկ սահմանվում է Ոստիկանությունում ծառայությունից ազատելու հիմքերը: Միաժամանակ, Նախագծի 7-րդ հոդվածով լրացվող 4-րդ կետում հանվել է «Հոդվածը» բառը, իսկ «մասով» բառը փոխարինվել է «մաս» բառով:	**Ընդունվել է**

10.	***Կառավարություն***	Նախագծի 9-րդ հոդված	Առաջարկվում է Նախագծի 9-րդ հոդվածի վերնագրում լրացնել «Եզրափակիչ մաս և» բառերը:	**Ընդունվել է** Նախագծի 9-րդ հոդվածի վերնագրում «Անցումային դրույթներ» բառերը փոխարինվել է «Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ» բառերով:	**Ընդունվել է**
11.	***ՀՀ Ազգային ժողովի Պաշտպանության և անվտանգության հարցերի մշտական հանձնաժողովի փոխնախագահ Արմեն Խաչատրյան***	Նախագծի 4-րդ հոդված	Առաջարկվում է Նախագծով նախատեսել դրույթ, որով ատեստավորման պահանջը կտարածվի նաև Ոստիկանության պետի տեղակալի պաշտոն զբաղեցնող ծառայողների համար՝ անհավասար մոտեցումից խուսափելու, և ղեկավար պաշտոններն ավելի որակյալ և բանիմաց ծառայողներով համալրելու նպատակով:	**Ընդունվել է** Նախագծի 4-րդ հոդվածով փոփոխվող 15-րդ հոդվածի՝ 1) 1-ին մասում «Ոստիկանության» բառից հետո լրացվել են «պետի տեղակալների, ոստիկանության գլխավոր, ավագ, միջին և կրտսեր խմբերի պաշտոն զբաղեցնող» բառերը, 2) 18-րդ (19-րդ) մասի 2-րդ կետում «բարձրագույն խմբի պաշտոնի» բառերը փոխարինվել են «պետի պաշտոնին» բառերով:	**Ընդունվել է**
«ՊԵՏԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ և ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԶԲԱՂԵՑՆՈՂ ԱՆՁԱՆՑ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ					
1.	***Կառավարություն***	Նախագծի վերնագիր	Առաջարկվում է Նախագծի վերնագրից հանել «և փոփոխություն» բառերը, քանի որ Նախագծով կատարվում են միայն լրացումներ:	**Ընդունվել է** Նախագծի վերնագրից հանվել են «և փոփոխություն» բառերը:	**Ընդունվել է**
2.	***ՀՀ Ազգային ժողովի Պաշտպանության և անվտանգության հարցերի մշտական հանձնաժողովի փոխնախագահ Արմեն Խաչատրյան***	1-ին, 2-րդ և 3-րդ հոդվածներ	Առաջարկվում է նախագծի ողջ տեքստում նախատեսել բացառություն ոստիկանության պետի պաշտոն զբաղեցնող ծառայողի համար:	**Ընդունվել է** Նախագծի 1-ին հոդվածում «ինչպես նաև ոստիկանության ծառայողների» բառերից հետո լրացվել են «(բացառությամբ ոստիկանության պետի պաշտոն զբաղեցնող ծառայողի)» բառերը: Նախագծի 2-րդ հոդվածում «ինչպես	**Ընդունվել է**

				նաև ոստիկանության ծառայողներին» բառերից հետո լրացվել են «(բացառությամբ ոստիկանության պետի պաշտոն զբաղեցնող ծառայողին)» բառերը: Նախագծի 3-րդ հոդվածի «մասի 1-ին նախադասությունում» բառերը փոխարինվել է «մասում» բառով, իսկ «, ինչպես նաև ոստիկանության ծառայողներին» բառերից հետո լրացվել են «(բացառությամբ ոստիկանության պետի պաշտոն զբաղեցնող ծառայողի)» բառերը: Միաժամանակ, հանվել են «իսկ 2-րդ նախադասությունում «զինծառայողներին» բառից հետո լրացնել «, ինչպես նաև ոստիկանության ծառայողներին (բացառությամբ բարձրագույն խմբի պաշտոններ զբաղեցնող ծառայողների)» բառերը»:	